

10289



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարարի  
պարտականությունները կատարող  
Արամ Մեյմարյան



«19» 09 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 193 - 24

Նախաձեռնողը՝

«ԴՈՒՍՏՐ ՇՈՒՇԱՆՆԱ» ՍՊԸ

ք. Երևան, Նուբարաշենի խճուղի 1

Գործունեությունը՝

Էրեբունի վարչական շրջանի Նուբարաշենի  
խճուղի 1/10 կառուցման շրջակա միջավայրի վրա  
ազդեցության գնահատման հաշվեկտրություն  
ք. Երևան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 193 - 24

«19» սեպտեմբեր 2024թ.

**Էրեբունի վարչական շրջանի Նուբարաշենի խճուղի 1/10 հասցեում պահեստային շինությունների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«ԴՈՒՍՏՐ ՇՈՒՇԱՆՆԱ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Երևան քաղաք

**Ներածական մաս.** «ԴՈՒՍՏՐ ՇՈՒՇԱՆՆԱ» ՍՊԸ-ի կողմից Նուբարաշենի խճուղի 1/10 հասցեում նախատեսվում է կառուցել պահեստային շինություններ բացառապես չոր տնտեսական ապրանքների, գրենական պիտույքների, կերամիկական սալիկների և նմանատիպ այլ պարագաների պահեստավորման համար:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման N 01-005-0646-0023 վկայականը /ծածկագիրը՝ 01-005-0646-0023/ և Երևանի քաղաքապետարանի կողմից 2023թ. հունիսի 16-ին տրամադրված N 01/18-07/1-Դ-21151-345 նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանք/: Հողամասի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականության: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 0,54945 հա:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8) կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Նախատեսվող գործունեության /այսուհետ՝ պահեստային շինություններ/ հողամասը գտնվում է Երևան քաղաքի Էրեբունի վարչական տարածքում: Հողամասի ռելիեֆը հարթ է, ամբողջովին ազդեցության ենթարկված, հողի բերրի շերտը բացակայում է, ծանաբեռնված է քանդման ենթակա երկու շինությունով: Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է մոտակա շինություններից՝ 10 մ, 40 մ և 87 մ, ճանապարհից՝ 2մ (գրունտային երկրորդական նշանակության՝ դեպի փակուղի տանող, ճանապարհ է): Տարածքին կից առկա են ինժեներական ենթակառուցվածքներ՝ ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման և էլեկտրամատակարարման համակարգեր:

Գործունեության տարածքում առկա է մեքենաների շարժ և աղմուկ: Տարածքից 1 կմ շառավղով բացակայում են բնության և պատմամշակութային հուշարձաններ, ջրային





ոեսուրսները, Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ: Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ծառահատումներ չեն կատարվելու:

Հիդրոերկրաբանական տեսակետից հայցվող տարածքում գրունտային ջրերը գտնվում են 15 մ-ից խորը հորիզոններում: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են:

Պահեստային շինությունների կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- հողի ընդհանուր մակերես՝ 5494.5 մ<sup>2</sup>,
- կառուցապատման մակերես՝ 3738 մ<sup>2</sup>,
- կանաչապատման մակերես՝ 400 մ<sup>2</sup>,
- ասֆալտապատման մակերես՝ 1318 մ<sup>2</sup>,
- մայթերի մակերես՝ 38,5 մ<sup>2</sup>:

Նախատեսվում է կառուցել երեք մասնաշենքից բաղկացած պահեստային շինություն, որից մեկը՝ մեկ հարկանի է 1990 մ<sup>2</sup>, տանիքում նախատեսվում է տեղադրել 250 կվտ հզորության թվով 81 արևային վահանակ: Արևային վահանակների սպասարկումը՝ ներառյալ վնասված կամ հին վահանակների փոխարինումը նորով, իրականացվելու է մասնագիտացված կազմակերպության կողմից /վաճառողի կողմից՝ պայմանագրային հիմունքներով/: Թիվ 2-ը երկհարկանի է՝ 960 մ<sup>2</sup>, թիվ 3-ը 788 մ<sup>2</sup> է և ունի 145 մ<sup>2</sup> նկուղային հարկ, որը կարող է օգտագործվել որպես պարզագույն թաքստոց՝ 15 հոգուց բաղկացած անձնակազմի համար: Թաքստոցն ապահովված է լինելու օդափոխման համակարգով, վթարային լուսավորությամբ և սանհանգույցով: Պահեստային շինությունների տանիքը նախատեսված է իրականացնել մետաղական կոնստրուկցիաներով, ծածկույթը՝ ձևավոր ցինկապատ թիթեղով: Օդափոխության համար նախատեսվում է ներածման և արտածման համակարգեր, որոնք տեղադրվելու են առաստաղի տակ:

Համաձայն հաշվետվության՝ նախատեսվում է գոյություն ունեցող շահագործման համար ոչ պիտանի երկու շինության քանդում, տարածքի մաքրում: Քանդման աշխատանքներն իրականացվելու են քանդման թույլտվության հիման վրա: Շինությունների պատերը տուֆ քարից են, ենթակա են կրկնակի օգտագործման, իսկ մնացած մետաղական մնացորդները և պանելները որպես շինադր՝ 40 մ<sup>3</sup> ծավալով կտեղափոխվեն աղբավայր:

Շինարարական աշխատանքները տևելու են 32 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ ավտովերամբարձ կոունկ, բեռնատար ինքնաթափ, բուլդոզեր, էքսկավատոր և այլն: Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված կետերում: Շինարարական տեխնիկայի կայանման համար նախատեսված տարածքում տեղադրվելու է ավազ կամ մանրախիճ: Տարածքում քսայուղեր և վառելանյութեր չեն պահեստավորվելու: Շինհրապարակում նախատեսվում է մեքենաների անիվների լվացման հարթակ:

Շինարարության ընթացքում օգտագործվող շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա: Բետոնը մատակարարվելու է պատրաստի վիճակում, մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով:

Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման և աշխատողների կոմունալ կենցաղային կարիքների համար: Տեխնիկական ջուրը կմատակարարվի լիցենզիա ունեցող կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով, որը կկնքվի շինարարության սկզբում կազմված:





կազմակերպության կողմից: Տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով: Ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 3 տ տարողությամբ բաքի մեջ: Շինարարության ընթացքում ջրի սպառումը կլինի ընդամենը 0,965 մ<sup>3</sup>/օր:

Շինարարության ընթացքում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է ըստ լցվածության, մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է շինարարական հրապարակին կից տեղադրել պլաստմասե պարզարան, որտեղ կուղղորդվեն անձրևաջրերը և անիվների վազման ջրերը: Պարզարանի պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով տիղմն, ինչն իրենից ներկայացնում է շինտեխնիկայի անիվների վազումից առաջացած հողի, ավազի և այլ մնացորդային նստվածք, մնացած աղբի հետ կտեղափոխվի աղբավայր:

Շինարարական հրապարակում տեղադրվելու է հրդեհաշիջման վահանակ՝ կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով:

Շինարարական աշխատանքների ընթացքում պահեստային մասնաշենքի էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի, իսկ շահագործման ընթացքում «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից և պահեստային 1-ին մասնաշենքի տանիքում տեղադրված արևակայանից:

Շահագործման փուլում պահեստային շինությունների ջրամատակարարման համակարգը միացվելու է քաղաքային ջրատարին, իսկ ջրահեռացման համակարգը՝ քաղաքային ջրահեռացման ցանցին՝ համաձայն «Վեոլա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Շահագործման փուլում գազամատակարարում նախատեսված է: Էլեկտրականությամբ ջեռուցվելու է միայն վարչական և բանվորական անձնակազմի գբաղեցրած տարաքծները:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ կատարվելու են հողային աշխատանքներ, որի արդյունքում առաջացած 6118 մ<sup>3</sup> հողային զանգվածից 3185 մ<sup>3</sup> օգտագործվելու է հետ լիցքի համար, իսկ մնացածը՝ 2933 մ<sup>3</sup> հողային զանգվածը տեղափոխվելու է 15 կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր՝ համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից տրված շինթույլտվության պահանջներին:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնատեսակներից շինաղբը, բետոնի մնացորդները, պարկերը և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, մետաղի ջարդոնը կհանձնվի հատուկ մասնագիտացված կազմակերպությունների՝ պայմանագրային հիմունքներով, իսկ քանդման արդյունքում առաջացած քարերը՝ տուֆը, որպես երկրորդային հումք կրկնակի կօգտագործվի: Կենցաղային աղբը շինարարության ընթացքում կազմելու է 3120 կգ/տարի: Կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու են 1.5\*1 չափերի 2 աղբարկղ, աղբահեռացումը կատարվելու ըստ անհրաժեշտության՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել աղբի տեսակավորման աղբամաններ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել և կանաչապատել: Կանաչապատումն իրականացվելու է գազոնի և ծաղկանոցի տեսքով: Կանաչապատման նպատակով օգտագործվող բույսերը ձևերը և





բերվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պայմանագրային հիմունքներով:  
Կանաչապատ տարածքի ոռոգումն իրականացվելու է ջրցան մեքենայով կամ ձեռքով, քանի որ տարածքը փոքր է:

Պահեստային շենքերի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմացմանն ուղղված մոնիթորինգ.

- > համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում,
- > բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության, տեխնիկական վերահսկողության իրականացում՝ ամենօրյա ռեժիմով,
- > աշխատողներին աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին իրազեկում,
- > կառուցապատման տարածքում ձայնակլանիչ կոնստրուկցիաների կիրառում,
- > շինտեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ,
- > տրանսպորտային միջոցների սպասարկում շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված ցակայաններում կամ սպասարկման կետերում,
- > շինարարական հրապարակում արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձի նշանակում,
- > թափոնների տեղափոխման կազմակերպում՝ ըստ համապատասխան պայմանագրերի,
- > հակահրդեհային պահանջների՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերի պատասխանատվության ապահովում:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսվում է հատկացնել 2.6 մլն. ՀՀ դրամ:

**Պարճառարանական մաս.** Փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների՝ ազդակիր համայնքի և Երևանի քաղաքապետարանի ավագանու անդամների կողմից արժանացել է հավանության:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Էրեբունի համայնքը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հաշվետվության լրամշակումներում:

Հանրային երկրորդ լսման ընթացքում առաջարկվեց շինարարական աշխատանքների ընթացքում մոտակա բնակավայրում իրականացնել աղմուկի և թրթռի գործիքային չափում, ինչը ստացավ դրական արձագանք մասնակիցների և կազմակերպության ներկայացուցիչների կողմից:

Նախատեսվում է իրականացնել կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում և բարեկարգում, ներբակային ճանապարհների կառուցում՝ ասֆալտապատումով, ինչպես նաև Նուբարաշենի խճուղուց դեպի տարածք մոտեցնող երկրորդային՝ գրունտային ճանապարհի ասֆալտապատում, ինչը կրում է սոցիալական բնույթ:

Ամփոփելով նախատեսվող գործունեության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում շրջակա





միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները՝ փոշին, աղմուկը և այլն, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ: Հնարավոր բացասական ազդեցությունները կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում:

### Փորձաքննական պահանջներ

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է.

1. Խստորեն հետևել գործունեությանն առնչվող՝ շրջակա միջավայրի պահպանության, քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների, աշխատանքի անվտանգության և այլ իրավական ակտերի պահանջներին:

2. Հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

3. Շինարարական աշխատանքի ավարտից հետո տարածքի կանաչապատումն իրականացնել՝ համաձայն ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված պահանջների:

4. Շինարարական աշխատանքների ընթացքում, համաձայն ՀՀ կառավարության 20.04.2002 թ. N 438 որոշման 43-րդ կետի, որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին:

### ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ԴՌԻՍՏՐ ՇՈՒՇԱՆՆԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Էրեբունի վարչական շրջանի Նուբարաշենի խճուղի 1/10 հասցեում պահեստային շինությունների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Ռուզան Մակինյան